

ԺԱՄԱՆԱԿԱԿՈՐ ՄԻԳՐԱՆՏԻ
ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ
ԼԵՐԱՍՏԱՆ



IOM • OIM

IOM International Organization for Migration
Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)
Հայաստանյան առաքելություն

ԺԱՄԱՆԱԿԱԿՈՐ ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ԼԵՋԱՍՏԱՆ



IOM International Organization for Migration
Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)
Հայաստանյան առաքելություն



Սույն ուղեցույցը հրատարակվել է Իտալիայի Կառավարության ֆինանսավորմամբ:

© **Հեղինակային իրավունքը պաշտպանված է:** Սույն հրատարակության ոչ մի մաս չի կարող վերարտադրվել, պահպանվել որոնողական համակարգում կամ փոխանցվել էլեկտրոնային, մեխանիկական, պատճենահանման, ծայնագրման կամ այլ եղանակով առանց հրատարակչի նախնական գրավոր թույլատվության:

Սույն հրատարակությունում արտահայտված կարծիքները կարող են չհամընկնել ՄՄԿ-ի կամ նրա անդամ-պետությունների պաշտոնական տեսակետների հետ:

Հրատարակիչ՝ Միգրացիայի միջազգային կազմակերպություն



IOM International Organization for Migration
OIM Organisation Internationale pour les Migrations
OIM Organización Internacional para las Migraciones

**Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)
Հայաստանյան առաքելություն**

Հայաստան • Երևան 0010 • ՄՄԿ-ի գրասենյակ
• Պետրոս Ադամյան փողոց 14, 1-ին հարկ

Հեռ.՝ (+374 10) 58 56 92 • 58 37 86 • Հեռապատճեն՝ (+374 10) 54 33 65

• Էլ.փոստ՝ iom@arminco.com • <http://www.iom.int/armenia>

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Սուտքի ընդհանուր պայմաններ և տեղեկություններ վիզաների մասին	5
2. Ներգաղթ զբաղվածության նպատակով	8
3. Ներգաղթ ուսանելու նպատակով	15
4. Կացություն	23
5. Ապաստանի տրամադրման կարգը	30
6. Ընտանիքների վերամիավորում	31
7. Առողջապահական համակարգը	33
8. Սոցիալական ապահովագրության համակարգը	34
9. Բնակարանային պայմաններ	36
10. Դիպլոմների ճանաչում	37
11. Միգրանտներին առաջարկվող աջակցության ծառայություններ	38
12. Քաղաքացիության ձեռքբերում	44

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ԼԵՅԱՍՏԱՆ

1. Մուտքի ընդհանուր պայմաններ և տեղեկություններ վիզաների մասին

Վիզաները կարող են տրամադրվել Լեհաստանի Հանրապետության դիվանագիտական առաքելությունների և հյուպատոսական հիմնարկների կողմից:

Տարանցիկ վիզաներ (A, B)

Օդանավակայանի վիզան (A) ձեռք բույլ է տալիս տարանցել Շենգենյան գոտու որևէ միջազգային օդանավակայանով՝ առանց մուտք գործելու Շենգենյան տարածք:

Տարանցիկ B վիզան տրամադրվում է 5 օր ժամկետով՝ Շենգենյան տարածքը ցամաքով տարանցելու համար:

Կարճաժամկետ գտնվելու Շենգենյան վիզա (C)

Քանի որ Լեհաստանը Շենգենյան Համաձայնագրի անդամ պետություն է, ապա Լեհաստանի մուտքի արտոնագիրը տնօրինողին իրավունք է տալիս մուտք գործել ամբողջ Շենգենյան տարածք: Կարճաժամկետ գտնվելու վիզան (C) տնօրինողին թույլ է տալիս Շենգենյան տարածքում մնալ մինչև 90 օր տվյալ 180-օրյա ժամկետում՝ զբոսաշրջության, ընտանեկան կամ գործարար նպատակներով:

Դիմորդների բազմաթիվ կատեգորիաներ (օրինական բնակիչ հանդիսացող քաղաքացիների ընտանիքի անդամներ, ուսանողներ և թոշակառուներ, լրագրողներ և այլն) կարող են այժմ ստանալ նաև անվճար վիզաներ:

Որոշ կատեգորիաների անձանց, օրինակ, գործարարների, ուսանողների և լրագրողների համար փաստաթղթերի պահանջները կլինեն

պարզեցված: Յաճախ ճամփորդողների որոշ կատեգորիաների (այդ թվում՝ գործարարներին, լրագրողներին, ուսանողներին, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին) կտրամադրվեն բազմակի մուտքի վիզաներ՝ վավերականության երկար ժամկետով, իսկ դիվանագիտական անձնագրեր ունեցողները կազատվեն մուտքի արտոնագրի պարտականությունից:

Կարճաժամկետ գտնվելու վիզայի (C) համար դիմելիս դուք պետք է ներկայացնեք.

1. դիմումի ձևը (http://www.msz.gov.pl/gallery/serwis/visa_en_52.pdf),
2. անձնագրի 2 լուսանկար,
3. վավեր անձնագիր,
4. հետդարձի տոմս կամ հյուրանոցի ամրագրում՝ զբոսաշրջության նպատակով մուտքի դեպքում,
5. փաստաթղթային ապացույցներ ճամփորդության նպատակի վերաբերյալ (պահանջվող կոնկրետ փաստաթղթերի մանրամասների համար դիմեք մոտակա դեսպանատուն),
6. ճամփորդության ծախսերը ծածկելու բավարար ֆինանսական միջոցների ապացույց:

Լեհաստանի կացության թույլտվություն ունեցողները կարող են ճամփորդել Շենգենյան տարածքում՝ առանց Շենգենյան վիզայի համար դիմելու անհրաժեշտության:

Երկարաժամկետ վիզա (D)

Երկարաժամկետ վիզան ուժի մեջ է միայն Լեհաստանի և ոչ թե ողջ Շենգենյան տարածքում: Դրա տրամադրման ժամանակահատվածը կախված է վիզայի տրամադրման պատճառներից և չի կարող գերազանցել 5 տարին: Երկարաժամկետ կացության վիզան կարող է տրամադրվել հետևյալ նպատակներով.

- այցելություն,
- տնտեսական գործունեության իրականացում,

- մշակութային գործունեության իրականացում կամ մասնակցություն միջազգային խորհրդաժողովների,
- օտարերկրյա պետական մարմնի կամ միջազգային կազմակերպության ներկայացուցիչների կողմից կանոնադրական գործառնությունների կատարում,
- ապաստան,
- աշխատանք,
- ուսումնառություն կամ ուսուցում (վերապատրաստում),
- ժամանակավոր պաշտպանություն:

Ձբաղվածության նպատակով երկարաժամկետ վիզայի համար դիմելիս դուք պետք է ձեր մոտակա լեհական դեսպանատուն /հյուպատոսություն ներկայացնեք.

- Աշխատանքի թույլտվության խոստում Լեհաստանում ապագա բնակության վայրի տեղական իշխանության (Վոեվոդա) կողմից: Այս խոստումը պաշտոնական փաստաթուղթ է, ըստ որի Վոեվոդան պարտավորվում է տրամադրել աշխատանքի թույլտվություն (միայն եթե դուք ձեռք եք բերում վիզա կամ կացության թույլտվություն ամրագրված ժամանակահատվածի համար):
- Կամ գործատուների՝ ձեզ վարձելու մտադրությունը հաստատող փաստաթուղթ, եթե այդ ոլորտներում զբաղվածության համար չի պահանջվում աշխատանքի թույլտվություն,
- վիզայի դիմումի ձևը,
- վավեր անձնագիր,
- անձնագրի երկու լուսանկար:

Ուսումնառության նպատակով երկարաժամկետ վիզայի համար դիմելիս դուք պետք է ձեր մոտակա լեհական դեսպանատուն/հյուպատոսություն ներկայացնեք.

- գրանցման վկայական հյուրընկալող համալսարանից, ակադեմիայից, ինստիտուտից, քոլեջից կամ դպրոցից,
- բժշկական տեղեկանք:

Ձեր կոնկրետ իրավիճակին առնչվող պահանջների և փաստաթղթերի լրիվ մանրամասների համար դիմեք ձեր մոտակա Լեհաստանի դեսպանատուն կամ հյուպատոսություն:

2. Ներգաղթ զբաղվածության նպատակով

ա) օտարերկրյա աշխատողների մուտքի և գտնվելու պայմանները

Աշխատանքի նպատակով երկարաժամկետ վիզայի (D) համար տես վերը՝ 2-րդ բաժին:

Աշխատանքի թույլտվություն

Ընդհանրապես, օտարերկրյա քաղաքացիները պետք է ձեռք բերեն աշխատանքի թույլտվություն՝ նախքան Լեհաստանում զբաղվածության մեջ ներգրավվելը: Այս ընդհանուր դրույթը կիրառվում է թե՛ ավանդական գործատու /աշխատող հարաբերությունների մեջ ներգրավված անձանց, թե՛ անկախ ձեռներեցների նկատմամբ, ովքեր իրականացնում են ծառայություններ պայմանագրային հիմունքներով: Միևնույն կանոնները կիրառվում են ընկերությունների ներսում աշխատողների փոխատեղումների հանդեպ:

Լեհաստանում աշխատելու համար դուք պետք է նախ Լեհաստանում գտնեք գործատու, որը կհամաձայնվի դիմելու աշխատանքի թույլտվության համար՝ այն շրջանի Վոեվոդա, որտեղ գտնվում է ընկերությունը/հաստատությունը: Աշխատանքի թույլտվությունը կտրամադրվի միայն այն դեպքում, եթե ապացուցվի, որ խնդրո առարկա աշխատատեղի համար չկա Լեհաստանի կամ ԵՄ քաղաքացի (կատարվում է աշխատուժի շուկայի ստուգում):

Օտարերկրացուն աշխատանքի վերցնելու ընթացակարգը հիմնականում բաղկացած է երեք փուլից.

1) ընթացակարգն սկսվում է տեղական կառավարման մարմնին (Վոեվոդա) դիմում ներկայացնելով՝ աշխատանքի թույլտվություն

տրամադրելու խոստման հայցով: Այս փաստաթուղթը հիմք է ծառայում աշխատանքային վիզայի և աշխատանքի թույլտվության տրամադրման համար, որոնք ձեզ հնարավորություն կտան մուտք գործելու և մնալու Լեհաստանում ձեր աշխատանքային պայմանագրի ժամկետի ընթացքում: Դիմումը ներկայացվում է ապագա գործատուի կողմից՝ նախատեսված աշխատանքի գտնվելու վայրի տեղական Աշխատանքի գրասենյակ: Հավանական գործատուն պարտավոր է թափուր աշխատատեղի մասին հայտարարություն տալ աշխատանքի գործակալությունների, մամուլի, ինտերնետի և Եվրոպական զբաղվածության ծառայությունների ցանցի (EURES) միջոցով. Գործատուն աշխատանքի թույլտվության համար դիմում է Վոեվոդա: Վոեվոդան ուսումնասիրում է դիմումը՝ հաշվի առնելով տեղական աշխատուժի շուկայի իրավիճակը «աշխատաշուկայի թեստի միջոցով և տրամադրում խոստում, որը նախորդում է աշխատանքի թույլտվության տրամադրմանը:

Օտարերկրացիներին վարձող գործատուներից չի պահանջվում դիմել աշխատանքի թույլտվության խոստման համար, եթե դիմումը ներկայացնելու օրը օտարերկրացին ունի վավեր աշխատանքային վիզա կամ Լեհաստանում ժամանակավոր կացության վիզա:

2) աշխատանքի թույլտվության մասին որոշման խոստումը հաստատվելուց հետո գործատուն խոստումն ուղարկում է ձեզ: Աշխատանքի վիզայի դիմումը կարելի է ներկայացնել ձեր ներկա օրինական կացության վայրի Լեհական դեսպանատուն/հյուպատոսություն: Խոստումը պետք է կցված լինի մուտքի արտոնագրի դիմումին:

3) Լեհաստան ժամանելուց հետո դուք պարտավոր եք օրինականացնել ձեր կացությունը (այսինքն՝ ձեռք բերել ժամանակավոր կացության թույլտվության): Երբ դուք ստանում եք նշված թույլտվությունը, գործատուն Վոեվոդային տրամադրում է ձեր աշխատանքի սկսման հնարավոր ժամկետը, և Վոեվոդան տրամադրում է աշխատանքի թույլտվություն (ոչ ավելի երկար ժամանակահատվածով, քան՝ աշխատանքի վիզայի կամ կացության թույլտվության ժամկետը):

Այն անձանց կատեգորիաները, որոնցից աշխատանքի թույլտվություն չի պահանջվում.

- անձինք, ովքեր ունեն երկրում հաստատվելու թույլտվություն՝ տրամադրված մինչև 2004 թ. մայիսի 1-ը,
- անձինք, ովքեր ունեն մշտական բնակության թույլտվություն՝ տրամադրված 2004 թ. մայիսի 1-ից հետո,
- Եվրոպական Տնտեսական Տարածքի (ԵՏՏ) անդամ պետությունների քաղաքացիներ և նրանց ընտանիքի անդամները, նույնիսկ եթե նրանք ԵՏՏ քաղաքացիներ չեն,
- Եվրոհամայնքի երկարաժամկետ կացության թույլտվություն ունեցողներ,
- Լեհաստանի քաղաքացու ընտանիքի անդամները,
- փախստականներ և այլ անձինք, որոնց գտնվելը հանդուրժելի է, եթե նրանք օգտվում են ժամանակավոր կամ լրացուցիչ պաշտպանությունից,
- օտարերկրացիներ, ովքեր իրականացնում են ուսուցումներ, անցնում են ստաժավորում, կատարում են խորհրդատվական կամ վերահսկող գործառույթ կամ որոշակի որակավորումներ և հնտություններ պահանջող գործառույթ Եվրոպական Միության գործունեության շրջանակներում իրականացվող ծրագրերում կամ այլ միջազգային օգնության ծրագրերում,
- օտարերկրացիներ, որոնց միջազգային համաձայնագրերը կամ կանոնակարգումները, որոնց անդամակցում է Լեհաստանը, թույլ են տալիս կատարել աշխատանք առանց աշխատանքի թույլտվության
- օտար լեզուների ուսուցիչներ, եթե նրանց աշխատանքի կարիքը հաստատվել է համապատասխան՝ Կրթության և ուսուցման նախարարի կողմից, կամ եթե այն լեզուն, որը նրանք դասավանդում են, իրենց մայրենի լեզուն է,
- օտարերկրացիներ, ովքեր օտար լեզուներ դասավանդողներ են, եթե նրանք ԵՏՏ, ԱՄՆ, Կանադայի, Ավստրալիայի կամ Նոր Զելանդիայի քաղաքացիներ են, եթե այն լեզուն, որը նրանք դասավանդում են, իրենց մայրենի լեզուն է,

- Լեհաստանում տեղակայված միջազգային ռազմական կառույցների շրջանակներում աշխատանքներ իրականացնող անձնակազմ,
- զանգվածային լրատվամիջոցների մշտական արտասահմանյան թղթակիցները, ովքեր հավատարմագրված են համապատասխան՝ Արտաքին գործերի նախարարի կողմից,
- արվեստագետներ (մինչև 30 օր՝ մեկ օրացուցային տարվա ընթացքում), ինչպիսիք են դերասանները, երաժիշտները, պարողները կամ մնջախաղի դերասանները,
- օտարերկրացիներ, ովքեր, պահպանելով իրենց մշտական բնակությունը արտասահմանում, ժամանակ առ ժամանակ վարում են դասախոսություններ, պատրաստում աշխատություններ կամ ունենում որոշակի գիտական կամ գեղարվեստական արժեք ներկայացնող ելույթներ, (մինչև 30 օր՝ մեկ օրացուցային տարվա ընթացքում),
- մարզիկներ, ովքեր իրականացնում են աշխատանքներ այնպիսի հաստատության համար, որի գլխավոր գրասենյակը գտնվում է Լեհաստանում, եթե նման աշխատանքը կրում է հատուկ ենտ բնույթ,
- եկեղեցականներ,
- Լեհաստանում ցերեկային ուսուցման ուսանողները՝ հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսների ընթացքում աշխատանքի համար,
- ստաժավորման շրջանակներում աշխատանքներ իրականացնող ուսանողները, որոնք ուղարկված են ուսանողական միջազգային միությունների անդամ հանդիսացող կազմակերպությունների կողմից,
- օտարերկրացիները, որոնց աջակցում են աշխատելու Լեհաստանի Հանրապետության տարածքում գտնվող օտարերկրյա պետությունների մշակութային հաստատություններում,
- օտարերկրացիները, ովքեր, պահպանելով իրենց մշտական բնակությունն արտասահմանում, օտարերկրյա գործատուի կողմից պատվիրակված են Լեհաստանի Հանրապետության

տարածք՝ ոչ ավելի, քան մեկ օրացուցային տարվա ընթացքում երեք ամիս ժամկետով՝ հետևյալ նպատակներով.

ա) օտարերկրյա գործատուի կողմից արտադրված սարքավորումների հավաքման, տեխնիկական սպասարկման կամ վերանորոգման աշխատանքներ կատարելու,

բ) պատվիրված տեխնիկա, մեքենաներ կամ այլ սարքավորումներ ստանալու, որոնք արտադրված են որևէ լեհ գործարարի կողմից,

գ) որևէ լեհ գործատուի աշխատողների վերապատրաստում, որը ստացել է ա) կետում նշված տեխնիկա, կառույցներ, մեքենաներ կամ այլ սարքավորումներ՝ դրանց սպասարկման կամ օգտագործման ժամանակահատվածում,

դ) ցուցահանդեսի տաղավարների, հավաքման և ապամոնտաժման, ինչպես նաև դրանց պահառության նպատակով, եթե ցուցադրողը օտարերկրյա գործատու է, որը օտարերկրացիներին պատվիրակում է այդ նպատակով,

- ԵՄ անդամ պետությունների քաղաքացիներ չհանդիսացող անձինք, որոնք զբաղված են (աշխատում են) ԵՄ որևէ անդամ պետության տարածքում և որոնք ժամանակավորապես պատվիրակվել են Լեհաստան իրենց գործատուի կողմից՝ ծառայություններ մատուցելու նպատակով,
- Թուրքիայի քաղաքացիները՝ Լեհաստանում չորս տարի ժամկետով օրինական կերպով աշխատելուց հետո, և նրանց ընտանիքի անդամները, եթե նրանք համատեղ ապրում են Լեհաստանում առնվազն հինգ տարի,
- Թուրքիայի քաղաքացիները, ովքեր ավարտել են Լեհաստանի դպրոցներ կամ համալսարաններ և երեխաներն են Թուրքիայի քաղաքացիների, ովքեր օրինական հիմքերով աշխատել են Լեհաստանի Հանրապետությունում առնվազն երեք տարի,
- Եվրոպական Միության դեսպանների համար՝ նրանց գործառույթների հետ կապված աշխատանք կատարողները,
- գիտահետազոտական և զարգացման մարմինների կանոնակարգումներում քննարկված առարկաների ոլորտներում ակադեմիական աշխատողները,

- բժիշկները կամ ատամնաբուժական վիրաբույժները, ովքեր ավարտել են Լեհաստանի բժշկական համալսարաններ,
- բուժքույրեր կամ մանկաբարձներ, ովքեր ավարտել են Լեհաստանի բուժքույրական և մանկաբարձական քոլեջներ,
- Լեհաստանի Հանրապետության սահմանակից պետությունների (Բելառուս, Ուկրաինա և Ռուսաստան) քաղաքացիներ՝ մինչև 6 ամիս ժամկետով՝ 12 անընդմեջ ամիսների ընթացքում,
- անձինք, ովքեր ձեռք են բերել այսպես կոչված «լեհական խարտիա» այն անձանց համար, ովքեր ունեն լեհական ծագում, սակայն կորցրել են Լեհաստանի քաղաքացիությունը ի հետևանք Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո սահմանների փոփոխության, և ԱՊՀ երկրների քաղաքացիներ են:

բ) աշխատուժի պակաս զգացող շուկայի հատվածները

Աշխատուժի շուկայի ավելցուկային առաջարկի և գործազրկության բարձր մակարդակի երկար տարիներից հետո ներկայումս Լեհաստանն աշխատուժի պակաս է զգում: 2006 թ. աշխատատեղերի մեծ մասն ստեղծվեց արտադրության, առևտրի և վերանորոգման, անշարժ գույքի և շինարարության ոլորտներում: Թափուր աշխատատեղերի ամենամեծ թիվն առկա է նախնական մասնագիտական կրթություն ունեցող մարդկանց համար, ապա՝ երրորդային կրթություն ունեցող մարդկանց համար: Ամենից պահանջարկված մասնագիտացումները ներառում են արհեստավարժ մասնագետներ (ֆինանսական, ապահովագրական, մարկետինգի, լոգիստիկայի և ՏՏ մասնագետներ), տեխնիկներ և հմուտ կամ ոչ-հմուտ արհեստավորներ:

գ) աշխատանքի որոնման կայքեր

www.monsterpolska.pl

www.jobs.pl

www.epraca.com.pl

www.pracuj.pl

www.praca.pl

<http://www.ogloszeniapraca.eua.pl/>

<http://www.i-praca.pl/>

<http://www.gowork.pl/>
<http://www.eures.praca.gov.pl/>

դ) օտարերկրացի տնային աշխատողների և օտարերկրյա աշխատուժի այլ որոշակի ծրագրեր

Լեհաստանի Հանրապետության սահմանակից պետությունների (Բելառուս, Ուկրաինա և Ռուսաստան) քաղաքացիները կարող են աշխատել Լեհաստանում առանց աշխատանքի թույլտվության՝ մինչև 6 ամիս ժամկետով՝ 12 անընդմեջ ամիսների ընթացքում:

3. Ներգաղթ ուսանելու նպատակով

ա) Լեհաստանի բարձրագույն կրթության համակարգը

Լեհաստանում բարձրագույն ուսումնական հաստատությունները (բուհերը) իրականացնում են հետևյալ տեսակի ուսումնական դասընթացներ.

- մասնագիտական բարձրագույն դասընթացներ (3-4 տարի). շրջանավարտները ձեռք են բերում լիցենզիատի կամ ճարտարագետի մասնագիտական աստիճան (արվեստների բակալավր՝ BA),
- մագիստրատուրայի դասընթացներ (5-6 տարի). շրջանավարտը, կախված դասընթացի պրոֆիլից, ձեռք է բերում մասնագիտական մագիստրոսի [magister] աստիճան կամ դրան համարժեք աստիճան (արվեստների մագիստրոս՝ MA),
- հետբուհական (հետդիպլոմային) մագիստրատուրայի դասընթացներ (2-2,5 տարի), մասնագիտական բարձրագույն դասընթացների շրջանավարտների համար. շրջանավարտն ստանում է մասնագիտական մագիստրոսի կամ դրան համարժեք աստիճան, (փիլիսոփայության դոկտոր՝ PhD),
- դոկտորական դասընթացներ (3-4 տարի). կարող են դիմել բուհերի շրջանավարտները, ովքեր ունեն մասնագիտական մագիստրոսի աստիճան և աշխատում են դոկտորի ակադեմիական աստիճան ստանալու համար,

- հետբուհական (հետդիպլոմային, ասպիրանտական) դասընթացներ (1-2 տարի)՝ բոլոր տեսակի բուհերի շրջանավարտներ համար:

Բուհերը տրամադրում են ցերեկային լրիվ ուսուցման դասընթացներ, հեռակա դասընթացներ, երեկոյան դասընթացներ և էքստեռն (ազատ ունկնդիրների) դասընթացներ: Ցերեկային լրիվ ուսուցման դասընթացները ուսուցման հիմնական ձևն են:

Գոյություն ունեն երկու տեսակի բարձրագույն ուսումնական հաստատություններ.

- համալսարանական տիպի բուհեր, որոնք առաջարկում են դասընթացներ հումանիտար գիտությունների, բնագիտության, բժշկական գիտությունների, տնտեսագիտության, մանկավարժության, արվեստի, և ռազմական ուսումնասիրությունների ոլորտներում,
- մասնագիտական բուհեր, որոնք կրթում են ուսանողներին որոշակի մասնագիտական ոլորտներում և պատրաստում նրանց որևէ մասնագիտական գործունեությամբ զբաղվելու համար:

Լեհաստանում բուհերի շրջանավարտներին շնորհվող մասնագիտական աստիճաններ

Լեհաստանում բուհերի շրջանավարտներն ստանում են հետևյալ աստիճանները.

- **լիցենզիատ** [licencjat] – աստիճան, որը ձեռք է բերվում՝ ավարտելով 3-3,5 տարի տևողությամբ մասնագիտական բարձրագույն կրթության դասընթացը,
- **ճարտարագետ** [inżynier] - աստիճան, որը ձեռք է բերվում՝ ավարտելով 3,5 - 4 տարի տևողությամբ մասնագիտական բարձրագույն կրթության դասընթացը ճարտարագիտության, գյուղատնտեսության կամ տնտեսագիտության ոլորտում,
- **մագիստրոսի** [magister] և համարժեք աստիճաններ՝ արվեստների մագիստրոս, ճարտարագիտության մագիստրոս (ճարտարապետ, բժիշկ, ատամնաբույժ, անասնաբույժ), որոնք շնորհվում են 5-6 տարի անընդմեջ մագիստրոսական դասընթացներն ավարտելուց

հետո: Մագիստրոսի աստիճան ստանալու մեկ այլ կերպ է՝ ավարտել 2-2,5 տարվա հետբուհական մագիստրատուրան բարձրագույն մասնագիտական կրթության դիպլոմ ունեցողների համար:

Նշված մասնագիտական աստիճանները ձեռք բերելու համար ուսանողը պետք է անցնի կատարողականի գնահատում իր ուսումնական ծրագրում ընդգրկված առարկաներից յուրաքանչյուրի և գործնական ուսուցման հանձնարարությունների համար, ներկայացնի և պաշտպանի իր դիպլոմային թեզը և հանձնի դիպլոմային քննությունը:

Շրջանավարտները, ովքեր շարունակում են կրթությունը դոկտորական դասընթացներում կամ զբաղվում գիտահետազոտական ուսումնասիրություններով, կարող են աշխատել հետևյալ ակադեմիական աստիճանների համար.

- **դոկտոր.** աստիճան, որը շնորհվում է նրան, ով հանձնել է դոկտորական քննությունները, առաջարկել և հաջողությամբ պաշտպանել է դոկտորական ատենախոսություն (դիսերտացիա): Նրանք, ովքեր ցանկանում են աշխատել դոկտորի ակադեմիական աստիճանի համար, պետք է ունենան մագիստրոսի մասնագիտական աստիճան կամ դրան համարժեք աստիճան,
- **հաբիլիտացված դոկտոր (doktor habilitowany).** այս աստիճանը շնորհվում է այն թեկնածուներին, ովքեր ունեն դոկտորի աստիճան, կարևոր ակադեմիական կամ գեղարվեստական նվաճումներ, առաջարկել են հաբիլիտացման ատենախոսություն և հաջողությամբ ավարտել հաբիլիտացման ընթացակարգը:

Պրոֆեսորը ակադեմիական աստիճան է, որը շնորհվում է Լեհաստանի Հանրապետության Նախագահի կողմից:

Ուսումնական դասընթացի կառուցվածքը և ուսումնական տարին՝ Ուսումնական տարին բաղկացած է ուսման երեսուն շաբաթից՝ շաբաթական մոտ երեսուն ժամ ուսուցմամբ և բաժանված է երկու կիսամյակի.

- ձմեռային կիսամյակը (հոկտեմբերի 1-ից մինչև հաջորդ օրացուցային տարվա նոտավորապես փետրվարի 15-ը) ներառում է ուսման տասնհինգ շաբաթ և ձմեռային քննաշրջանը,
- ամառային կիսամյակը (նոտավորապես փետրվարի 16-ից մինչև սեպտեմբերի 30-ը) ներառում է ուսման տասնհինգ շաբաթ և ամառային քննաշրջանը:

Քննություններ

Ուսանողները քննություններ են հանձնում յուրաքանչյուր առանձին առարկայից: Կատարողականի (աշխատանքների) գնահատման ժամկետն ընդգրկում է կա՛մ մեկ կիսամյակ, կա՛մ մեկ ուսումնական տարի: Կիսամյակը (կամ տարին) հաջողությամբ ավարտելու համար ուսանողը պետք է ստանա անցնող (այսինքն՝ առնվազն «բավարար») գնահատական իր առարկայացանկում ընդգրկված առարկաների բոլոր գնահատումներից և քննություններից և ստանա կատարողականի գնահատման կրեդիտներ իր կրթական ծրագրում ընդգրկված բոլոր աշխատանքային պրակտիկաների համար:

Յուրաքանչյուր բուհ որոշում է իր գնահատման սանդղակը իր «Ուսման կանոններում»: Ամենատարածված սանդղակը ներառում է հետևյալ գնահատականները.

- շատ լավ (5)
- լավ գումարած (4 + կամ 4,5)
- լավ (4)
- բավարար գումարած (3 + կամ 3,5)
- բավարար (3)
- անբավարար (2):

Ի լրումն այս գնահատման սանդղակի, Լեհաստանի բուհերն անցում են կատարում դեպի Եվրոպական կրեդիտների փոխանցման համակարգ (ԵԿՓՅ՝ ECTS), որի համաձայն որոշակի թվով կրեդիտներ են հատկացվում տվյալ առարկային՝ անկախ ստացած գնահատականներից: Կախված առարկայից, կատարողականի գնահատումն անցնելը կարող է ուսանողին բերել 2-ից մինչև 12-14 ԵԿՓՅ կրեդիտ: Քննությունը

հանձնելով, ուսանողը պետք է խնդրի, որ դա ընդգրկվի իր առաջադիմության թերթիկում՝ շնորհված կրեդիտների հետ միասին: Կիսամյակը ըստ տարին հաջողությամբ փակելու համար ուսանողը պետք է հավաքի համապատասխանաբար 30 կամ 60 կրեդիտ: ԵԿՓՅ ներդրումից հետո Լեհաստանի ավելի ու ավելի մեծ թվով ուսանողներ կարող են իրենց ուսումնառության մի մասն ստանալ օտարերկրյա բարձրագույն ուսումնական հաստատություններում: Բացի դրանից, ԵԿՓՅ կրեդիտները թույլ են տալիս, որ օտարերկրյա ուսանողների՝ Լեհաստանի բուհերում ուսման ժամանակահատվածները ճանաչվեն:

Դիպլոմային նախագծեր և դիպլոմային քննություններ

Բարձրագույն կրթության ավարտական դիպլոմ ստանալու համար ուսանողը պետք է՝

- անցնի աշխատանքների գնահատում բոլոր առարկաներից, աշխատանքային պրակտիկաներից և գործնական աշխատանքի շրջաններից և անցնի ուսումնական ծրագրի բոլոր քննությունները ուսման տվյալ բնագավառի համար,
- նշանակված օրը ներկայացնի դիպլոմային նախագիծ և դրա համար ստանա անցնող գնահատական,
- հանձնի դիպլոմային քննությունը:

Ծախքերը

Բարձրագույն կրթության պետական բուհերում ցերեկային լրիվ ուսուցումը անվճար է Լեհաստանի քաղաքացիների համար:

Եթե դուք՝

- ունեք հաստատվելու թույլտվություն,
- Լեհաստանում ճանաչվել եք որպես փախստական,
- Լեհաստանում օգտվում եք ժամանակավոր պաշտպանությունից,
- ԵՄ անդամ պետության կամ Եվրոպական Տնտեսական Տարածքի պայմանագրի անդամ պետության քաղաքացի եք և նախկինում աշխատել եք կամ ներկայում աշխատում եք Լեհաստանում, կամ նման անձի ընտանիքի անդամ եք, եթե Լեհաստանի բնակիչ (ռեզիդենտ) եք, ապա կարող եք ձեռնարկել և շարունակել

ուսումը և մասնակցել գիտահետազոտական աշխատանքների և վերապատրաստման ծրագրերի և համակարգերի՝ նույն պայմաններով, ինչ՝ Լեհաստանի քաղաքացիները, այսինքն, դուք իրավունք ունեք անվճար ուսման, կարող եք դիմել կրթաթոշակների, կրթական դրամաշնորհների, ուսանողական վարկերի, ուսանողական կացարանների և այլնի համար:

Մյուս բոլոր արտասահմանցի ուսանողներից պահանջվելու է վճարել ուսման վարձ՝ ոչ պակաս, քան հետևյալ գումարների համարժեքը լեհական զլոտիով (LՁ՝ PLN).

- 2000 եվրո մասնագիտական բարձրագույն կրթության, մագիստրատուրայի և հետդիպլոմային մագիստրատուրայի յուրաքանչյուր տարվա համար,
- 3000 եվրո դոկտորական, հետդիպլոմային և մասնագիտացված դասընթացների, ինչպես նաև գիտական, գեղարվեստական, մասնագիտացված և հաբիլիտացման պրակտիկայի յուրաքանչյուր տարվա համար,
- 3000 եվրո միջին մասնագիտական դասընթացների և աշկերտության յուրաքանչյուր տարվա համար,
- 2000 եվրո լեզվի դասընթացների յուրաքանչյուր տարվա համար, այդ թվում, լեհերեն լեզվով սովորելու համար նախապատրաստվելու դասընթացը:

Հիմնավորված դեպքերում բուհը կարող է ուսանողի խնդրանքով նվազեցնել ուսման վարձը կամ ընդհանրապես դա չպահանջել:

Ուսանողական կացարաններում տեղավորվելու ծախսը կազմում է ամսական 140 եվրոյից մինչև 200 եվրո մեկ սենյակի համար և 50 եվրոյից մինչև 80 եվրո ընդհանուր սենյակի համար՝ կախված սենյակի կարգից:

Այցելեք նաև <http://www.buwiwm.edu.pl/publ/guide/index.htm>

բ) ուսանողների համար մուտքի և մնալու պայմանները

Դուք կարող եք ուսանել Լեհաստանում երկարաժամկետ վիզայի կամ ժամանակավոր կացության թույլտվության հիման վրա, և եթե առողջ եք, ինչպես փաստում է բժշկական վկայականը (տեղեկանքը): Դուք պետք է ունենաք բարձրագույն ուսումնական հաստատության ընդունելության վկայական (matriculation certificate) կամ այլ համարժեք փաստաթուղթ, որն ապացուցում է բարձրագույն կրթության համակարգ ընդունվելու ձեր իրավունքը այն երկրում, որտեղ ավարտել եք միջնակարգ դպրոցը: Յուրաքանչյուր բարձրագույն ուսումնական հաստատություն որոշում է իր ցուցակագրման պայմանները և ընթացակարգը, ինչպես նաև ընդունելության քննության շրջանակները, որ պետք է հանձնեն թեկնածուները հաջորդ օրացուցային տարում:

Ուսումնառության նպատակով երկարաժամկետ վիզայի համար դիմելիս դուք պետք է (ի թիվս այլ փաստաթղթերի) մոտակա լեհական դեսպանատուն/հյուպատոսություն ներկայացնեք.

- ցուցակագրման վկայական հյուրընկալ բուհից, ակադեմիայից, ինստիտուտից, քոլեջից կամ դպրոցից,
- բժշկական տեղեկանք:

Աշխատելու իրավունք

Լեհաստանում ցերեկային լրիվ ուսուցման երրորդ մակարդակի դասընթացների ուսանողները կարիք չունեն աշխատանքի թույլտվության՝ հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսների ընթացքում աշխատելու համար:

բ) բուհական և հետբուհական կրթաթոշակներ

Գիտության և բարձրագույն կրթության նախարարությունը ժամանակ առ ժամանակ սահմանում է կրթաթոշակների չափաբաժին (քվոտա) այն անձանց համար, ովքեր կրթություն են ստանում Լեհաստանում միջազգային պայմանագրերի շրջանակներում կամ բարձրագույն կրթության համար պատասխանատու նախարարի որոշմամբ:

Օտարերկրյա ուսանողների կրթաթոշակների դիմումները, որոնք քվոտայի շրջանակներում են, Լեհաստանի հյուպատոսական/դիվանագիտական առաքելությունների կողմից

փոխանցվում են Ակադեմիական փոխճանաչման և միջազգային փոխանակման բյուրո: Այնտեղից, դիմումները վերանայվում են Բյուրոյի Լեհաստանում օտարերկրացիների հավաքագրման և կրթության բաժնի կողմից: Վերջնական որոշումը կայացնում է Գիտության և բարձրագույն կրթության նախարարը:

Կրթաթոշակներ միջբուհական համաձայնագրերի շրջանակներում

Որոշ լեհական և արտասահմանյան բարձրագույն ուսումնական հաստատություններ ունեն համաձայնագրեր ուսանողների և ակադեմիական ու հետազոտական կազմի ժամանակավոր փոխանակման վերաբերյալ: Յուրաքանչյուր դեպքում ներգրավված բուհերը համաձայնեցնում են կրթաթոշակների տրամադրման կանոնները: Լեհաստանում կրթաթոշակ հայցող օտարերկրյա ուսանողը պետք է բավարարի միջբուհական փոխանակման որոշակի պահանջներ: Որոշ բուհեր ունեն իրենց սեփական կրթաթոշակային ծրագրերը:

զ) գլխավոր համալսարանների և քոլեջների ցուցակը

Տես <http://www.unesco.org/iau/onlinedatabases/list.html>

դ) օտարերկրյա ուսանողների ծրագրեր, եթե կիրառելի են

Միջազգային ակադեմիական ծրագրեր (Academic programmes International)

http://www.academicintl.com/country.php?country_id=7&content_id=7&country_image_id=7

Antioch Education Abroad

<http://aea.antioch.edu/eit/>

<http://aea.antioch.edu/ws/>

Անդրատլանտյան հետազոտությունների մագիստրոսի կոչում Կրակովում

<http://www.transatlantic.uj.edu.pl/main.php>

Եվրոպագիտություն Կրակովում

<http://www.ces.uj.edu.pl/>

Իրավաբանության մագիստրոսական (LLM) ծրագրեր Լեհաստանում
<http://www.llm-guide.com/poland>

Լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել
<http://www.howtostudyinpoland.pl/index.php> հասցեում:

4. Կացություն

Ժամանակավոր կացության թույլտվություն (pobyt na czas oznaczony)

Ժամանակավոր կացության թույլտվությունը կարող է տրամադրվել մինչև 2 տարի ժամկետով՝ երկարաձգման հնարավորությամբ, որը սակայն չի կարող գերազանցել 10 տարին:

Ժամանակավոր բնակության թույլտվություն տրամադրվում է այն միգրանտին, ով՝

- ձեռք է բերել համապատասխան Վոեվոդայի կողմից աշխատանքի թույլտվություն տրամադրելու խոստում կամ գործատուի գրավոր հայտարարությունը, որը հաստատում է միգրանտի վարձելու մտադրությունը, եթե աշխատանքի թույլտվություն չի պահանջվում: Աշխատանքի թույլտվությունը տրամադրվում է Վոեվոդայի կողմից՝ գործատուի խնդրանքով, որը մտադիր է աշխատանքի վերցնել միգրանտի: Միգրանտը պետք է ցույց տա կայուն և կանոնավոր եկամտի աղբյուր, որը բավարար է ծածկելու իր կենսապահովման ծախսերը, ինչպես նաև ընտանիքի անդամների կենսապահովման ծախսերը, առողջության ապահովագրություն և իրավական հիմք այն բնակարանի նկատմամբ, որտեղ միգրանտն ապրում է կամ մտադիր է ապրել,
- իրականացնում է տնտեսական գործունեություն, որը շահեկան է ազգային տնտեսության համար և, մասնավորապես, նպաստում է ներդրումների զարգացմանը, տեխնոլոգիաների փոխանցմանը, նորարարություններին կամ աշխատատեղերի ստեղծմանը:

Միգրանտը պետք է ցույց տա կայուն և կանոնավոր եկամտի աղբյուր, որը բավարար է ծածկելու իր կենսապահովման ծախսերը, ինչպես նաև ընտանիքի անդամների կենսապահովման ծախսերը, առողջության ապահովագրություն և այն բնակարանի նկատմամբ իրավական հիմք, որտեղ միգրանտն ապրում է կամ մտադիր է ապրել,

- արվեստի ոլորտում ճանաչված նվաճումներ ունեցող անձ է, որը մտադիր է շարունակել ստեղծագործական գործունեությունը Լեհաստանում,
- մասնակցում է Եվրոպական Միության ծրագրերի շրջանակներում իրականացվող վերապատրաստման և միջին մասնագիտական ուսուցման,
- մտադիր է, որպես ընտանիքի անդամ, ուղեկցելու միգրանտ աշխատողին, որի կատեգորիան նշված է Թուրինի 1961 թ. հոկտեմբերի 18-ի Եվրոպական սոցիալական խարտիայում,
- Լեհաստանի քաղաքացու ամուսինն (կինն) է,
- ցանկանում է վերամիավորվել ընտանիքի անդամի հետ, որն ապրում է Լեհաստանում,
- Լեհաստանում ծնված՝ չուղեկցվող անչափահաս է,
- ամուսինը (կինը) կամ չափահաս երեխան է Լեհաստանում բնակվող միգրանտի, որը բնակվում է Լեհաստանում առնվազն 5 տարի՝ ընտանիքի վերամիավորման նպատակով տրամադրված ժամանակավոր կացության թույլտվության հիման վրա,
- այրիացած, ամուսնալուծված կամ բաժանված ապրող միգրանտ է կամ որի ծնողը կամ երեխան մահացել է, և նա գտնվում է Լեհաստանում ընտանիքի վերամիավորման նպատակով տրամադրված ժամանակավոր կացության թույլտվության հիման վրա, եթե դա բխում է միգրանտի շահերից: Միգրանտի շահերը, որոնք հիմնավորում են կացության տրամադրումը, կարող են լինել նրա երեխայի դպրոց հաճախելը, հասարակությանն ինտեգրվելը կամ Լեհաստանում աշխույժ գործունեություն ծավալելը,
- Լեհաստանում գտնվող այրիացած, ամուսնալուծված միգրանտ է, որը եղել է Լեհաստանի քաղաքացու ամուսինը (կինը), եթե

ժամանակավոր կացության թույլտվությունը պետք է տրամադրվի միգրանտի շահերից ելնելով,

- անչափահաս երեխա է, որը ծնվել է Լեհաստանում՝ ժամանակավոր կացության թույլտվություն ունեցող միգրանտից,
- անձ է, որին շնորհվել է Եվրոհամայնքի երկարաժամկետ կացության թույլտվություն ԵՄ մեկ այլ երկրում, և նա մտադիր է աշխատել, իրականացնել տնտեսական գործունեություն, սովորել կամ մասնակցել ուսուցման Լեհաստանում, կամ ներկայացնել և հաստատել Լեհաստանում մնալու այլ պատճառներ: Ժամանակավոր կացության թույլտվությունը կարող է տրամադրվել նման միգրանտի ամուսնուն (կնոջը): Միգրանտը պետք է հաստատի կայուն և կանոնավոր եկամտի աղբյուր, որը բավարար է ծածկելու իր կենսապահովման ծախսերը, ինչպես նաև ընտանիքի անդամների կենսապահովման ծախսերը, առողջության ապահովագրություն և այն բնակարանի նկատմամբ իրավական հիմք, որտեղ միգրանտն ապրում է կամ մտադիր է ապրել,
- թրաֆիքինգի զոհ է, որը բնակվում է Լեհաստանի տարածքում, համագործակցում է ոստիկանության հետ և խզել է կապերը թրաֆիքինգ իրականացնողների հետ (թույլտվությունը տրամադրվում է մինչև 6 ամիս ժամկետով),
- Վոեվոդան կարող է պայմանականորեն տրամադրել ժամանակավոր կացության թույլտվություն, եթե միգրանտը բավարարում է Վոեվոդայի սահմանած պահանջները: Ժամանակավոր կացության թույլտվություն կարող է տրամադրվել միգրանտին, որը՝
- մտադիր է ձեռնարկել կամ շարունակել ուսումը կամ մասնակցել միջին մասնագիտական ուսուցման Լեհաստանում: Միգրանտը պետք է ներկայացնի համապատասխան ուսումնական հաստատության կողմից տրված ընդունման վկայական (թույլտվությունը տրամադրվում է մինչև 1 տարի ժամկետով),
- ապացուցում է, որ ժամանակավոր կացության թույլտվության պարտադիր տրամադրումը իր կացությունը Լեհաստանում հիմնավորվում է 3 ամիսը գերազանցող ժամկետով: Նման հանգամանքներ կարող են լինել միգրանտի ընտանիքի հիվանդ

անդամին խնամելը: Նման իրավիճակում Վոեվոդան կարող է տրամադրել ժամանակավոր բնակության թույլտվություն: Միգրանտը պետք է հաստատի կայուն և կանոնավոր եկամտի աղբյուր, որը բավարար է ծածկելու իր կենսապահովման ծախսերը, ինչպես նաև ընտանիքի անդամների կենսապահովման ծախսերը, և առողջության ապահովագրություն: Միգրանտը պարտավոր չէ ներկայացնել իրավական հիմք այն բնակարանի նկատմամբ, որտեղ ապրում է կամ մտադիր է ապրել:

Դիմումը պետք է ներկայացվի Լեհաստանում միգրանտի նախատեսվող բնակության վայրի նկատմամբ իրավասու Վոեվոդային: Արտերկրում բնակվող միգրանտը պետք է ներկայացնի դիմումը հյուպատոսի միջոցով: Որոշումը կայացնում է Լեհաստանում միգրանտի նախատեսվող բնակության վայրի նկատմամբ իրավասու Վոեվոդան:

Կացության դիմումը պետք է ներկայացվի լեհերեն: Այլ լեզուներով օժանդակ փաստաթղթերը պետք է թարգմանված լինեն պաշտոնական թարգմանչի կողմից: Վոեվոդան կամ հյուպատոսը կարող են պահանջել, որ դիմորդը ցույց տա փաստաթղթի բնօրինակը՝ պատճենը հաստատելու նպատակով:

Դիմորդը պետք է ներկայացնի բոլոր փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են հաստատելու դիմումի մեջ ներառված տվյալները և դիմումը հիմնավորող հանգամանքները (օրինակ, աշխատանքի թույլտվություն, ամուսնության վկայական կամ տեղեկանք համալսարանից): Ժամանակավոր բնակության թույլտվության դիմող միգրանտը, որը՝

- ձեռք է բերել աշխատանքի թույլտվության տրամադրման խոստում կամ նման խոստման երկարաձգում, կամ գործատուի գրավոր հայտարարությունը, որը հաստատում է միգրանտի վարձելու մտադրությունը, եթե աշխատանքի թույլտվություն չի պահանջվում:
- իրականացնում է տնտեսական գործունեություն,
- մտադիր է ժամանել Լեհաստան ընտանիքի վերամիավորման նպատակով,

- մտադիր է մնալ Լեհաստանի տարածքում ժամանակավոր բնակության թույլտվության հիման վրա, որը տրամադրվել է ընտանիքի վերամիավորման նպատակով,
- ստացել է Եվրոհամայնքի երկարաժամկետ բնակության թույլտվություն ԵՄ այլ երկրում և մտադիր է աշխատել կամ իրականացնել տնտեսական գործունեություն Լեհաստանում, կամ նման միգրանտի ամուսինն (կինն) է,
- ուսանում է,

բացի համապատասխան փաստաթղթերից, պետք է ունենա նաև՝

- ապահովված կացարան Լեհաստանում, այսինքն, իրավական հիմք այն բնակարանի նկատմամբ, որտեղ միգրանտն ապրում է կամ մտադիր է ապրել, և պետք է հաստատի բնակարան վարձելու արժեքը: Միգրանտը պետք է դիմումին կցի վարձակալության պայմանագիրը, որտեղ նշված է վարձակալության վճարի չափը: Բնակարանի նկատմամբ իրավական հիմքը, որին տիրապետում է պապը (տատը), երեխաները, ամուսինը (կինը), ամուսնու (կնոջ) ծնողները, կամ եղբայրը (քույրը), համարվում է բավարար:
- հաստատված կայուն և կանոնավոր եկամտի աղբյուր, որը բավարար է ծածկելու իր կենսապահովման ծախսերը, ինչպես նաև ընտանիքի անդամների կենսապահովման ծախսերը,
- առողջության ապահովագրություն:

Ժամանակավոր բնակության թույլտվության դիմումը պետք է ներկայացվի ունեցած վիզայի վավերականության կամ նախորդ ժամանակավոր բնակության թույլտվության վավերականության ժամկետը լրանալուց առնվազն 45 օր առաջ:

Եթե նշված ժամանակահատվածում որոշում կայացնել հնարավոր չէ, ապա Վոեվոդան պետք է միգրանտին տրամադրի նոր վիզա ի պաշտոնե (ex officio): Նոր վիզայի գործողության ժամկետը չպետք է լրանա նախքան առաջին ատյանի վարույթի ավարտը:

Այն միգրանտը, որին չի տրամադրվել ժամանակավոր բնակության թույլտվություն, կարող է բողոքարկել որոշումը Օտարերկրացիների գրասենյակի նախագահին: Նման դեպքում միգրանտը պարտավոր չէ լքել Լեհաստանի տարածքը նախքան վիզայում նշված կացության ժամկետը լրանալը, մինչև բողոքարկման վերաբերյալ որոշման ընդունումը:

Եվրոհամայնքի երկարաժամկետ բնակության թույլտվություն

Եվրոհամայնքի երկարաժամկետ բնակության թույլտվություն կարող է տրամադրվել Լեհաստանում առնվազն 5 տարի օրինական հիմքերով և անընդմեջ բնակվող միգրանտին, որն ունի իրավական հիմք այն բնակարանի նկատմամբ, որտեղ ապրում է կամ մտադիր է ապրել, կայուն և կանոնավոր եկամտի աղբյուր, որը բավարար է ծածկելու իր կենսապահովման ծախսերը, ինչպես նաև ընտանիքի անդամների կենսապահովման ծախսերը, և առողջության ապահովագրություն: ԵՅ երկարաժամկետ բնակության թույլտվությունը տրամադրվում է անսահմանափակ ժամկետով:

Միգրանտի կացության հետևյալ ժամանակահատվածները չեն ներառվում 5 տարի կացության ժամանակահատվածում, եթե նա՝

- կալանավորվել, ձերբակալվել է արտաքսման նպատակով կամ զրկված է եղել ազատությունից դատարանի որոշման հիման վրա,
- աշխատում է որպես «օտարերկրացի տնային աշխատող», սեզոնային աշխատող է կամ մատուցում է անդրսահմանային ծառայություններ,
- բնակվում է Լեհաստանում հատուկ վիզայի հիման վրա, որը տրամադրել է Վոեվոդան՝ Օտարերկրացիների գրասենյակի նախագահի համաձայնությունն ստանալուց հետո,
- բնակվում է Լեհաստանում ֆիքսված ժամանակահատվածով բնակության թույլտվության հիման վրա, որը տրամադրվել է ընտանիքի վերամիավորման նպատակով,
- դիվանագիտական առաքելության ղեկավարն է կամ աշխատակազմի անդամը:

Հաստատվելու թույլտվություն

Հաստատվելու թույլտվություն կարող է տրամադրվել միգրանտին, որն առնվազն 2 տարի անընդմեջ ժամանակավոր բնակվել է Լեհաստանում, կարող է ապացուցել մշտական ընտանիքի կամ Լեհաստանի հետ

տնտեսական կապերի գոյությունը, և Լեհաստանում ունի ապահովված կացարան և աջակցություն:

Չետկյալ անձինք կարող են դիմել հաստատվելու թույլտվության համար.

- հաստատվելու թույլտվություն ունեցողների անչափահաս երեխաները, եթե նրանք ծնվել են Լեհաստանում,
- Լեհաստանի քաղաքացիների անչափահաս և նրանց խնամքի տակ գտնվող երեխաները,
- Լեհաստանի քաղաքացու ամուսինը (կինը), պայմանով, որ ամուսնությունը կնքվել է դիմումից առնվազն 3 տարի առաջ և ամուսինը (կինը) ժամանակավորապես բնակվել է Լեհաստանում առնվազն 2 տարի,
- փախստականները՝ 5 տարվա անընդմեջ բնակությունից հետո, և հանդուրժելի կացությամբ անձինք՝ 10 տարվա անընդմեջ բնակությունից հետո:

Ձեզ ցանկացած կացության թույլտվություն շնորհվելուց հետո ձեզ կտրամադրվի կացության քարտ, որը հաստատում է ձեր ինքնությունը, և, ճամփորդական փաստաթղթի հետ միասին, ձեզ թույլ է տալիս բազմաթիվ անգամներ հատել սահմանը՝ առանց վիզա ձեռք բերելու անհրաժեշտության:

5. Ապաստանի տրամադրման կարգը

Լեհաստանում փախստականի կարգավիճակ շնորհելու համար պատասխանատու մարմինը **Օտարերկրացիների գրասենյակն** է՝ <http://www.udsc.gov.pl/>:

Դիմորդը պետք է ներկայացնի փախստականի կարգավիճակ շնորհելու մասին դիմում **Սահմանապահ դիվիզիայի** հրամանատարի միջոցով, որի գործունեության տարածքային շրջանակն ընդգրկում է Վարշավա քաղաքը, կամ սահմանային անցակետի հրամանատարի միջոցով՝

Լեհաստան մուտք գործելու ժամանակ սահմանային հսկողության ընթացքում:

Ապաստան հայցողներին տրամադրվող օգնությունը ներառում է կենտրոնում տեղավորելը կամ ֆինանսական նպաստ՝ Լեհաստանում գտնվելու ծախսերը և բժշկական օգնության (խնամքի) ծախսերը ծածկելու համար: Օգնությունը կարող է ներառել նաև Լեհաստանից կամավոր հայրենադարձման ծախսերը:

Օտարերկրացիների գրասենյակի նախագահի որոշումը փախստականի կարգավիճակ տրամադրելու և հետ վերցնելու վերաբերյալ կարող է բողոքարկվել Փախստականների խորհուրդ:

Եթե դիմորդին մերժվում է փախստականի կարգավիճակը, ապա նրան կարող է տրամադրվել հանդուրժելի կերպով մնալու թույլտվություն, կամ կարգադրվել հեռանալ Լեհաստանի Հանրապետության տարածքից որոշման մեջ սահմանված ժամկետում, որը չպետք է գերազանցի 30 օրը: Հանդուրժելի կերպով մնալու թույլտվությունը տալիս է Լեհաստանում աշխատելու իրավունք՝ առանց աշխատանքի թույլտվության, անվճար բժշկական օգնությունից և սոցիալական աջակցության այլ ձևերից օգտվելու իրավունք:

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝

<http://www.udsc.gov.pl/Procedure,for,granting,the,refugee,status,266.html>

(անգլերեն):

6. Ընտանիքների վերամիավորում

Լեհաստանում ապրող միգրանտի ընտանիքի անդամին կարող է տրամադրվել ժամանակավոր բնակության թույլտվություն: Հետևյալ անձինք համարվում են ընտանիքի անդամներ՝ ընտանիքի վերամիավորման նպատակով.

- ամուսին (կին), եթե ամուսնությունը ճանաչվում է Լեհաստանի գործող օրենքով,
- անչափահաս երեխա,
- միգրանտի ամուսնու (կնոջ) անչափահաս երեխան,

- անչափահաս երեխայի ծնողները, որին Լեհաստանում տրվել է փախստականի կարգավիճակ:

Ընտանիքի վերամիավորման նպատակով ժամանակավոր բնակության թույլտվություն կարող է տրամադրվել հետևյալ անձանց ընտանիքի անդամներին.

- հաստատվելու թույլտվություն ունեցող միգրանտներ,
- Եվրոհամայնքի երկարաժամկետ բնակության թույլտվություն ունեցող միգրանտներ,
- ճանաչված փախստականներ,
- միգրանտներ, ովքեր առնվազն 2 տարի ունեցել են ժամանակավոր բնակության թույլտվություն:

Միգրանտը պետք է ապացուցի, որ ունի կայուն և կանոնավոր եկամտի աղբյուր, որը բավարար է ծածկելու իր կենսապահովման ծախսերը, ինչպես նաև ընտանիքի անդամների կենսապահովման ծախսերը, առողջության ապահովագրություն: Գանաչված փախստականի ընտանիքի անդամ հանդիսացող միգրանտը պարտավոր չէ հաստատել եկամուտները և առողջության ապահովագրությունը, եթե բնակության թույլտվության դիմումը ներկայացվել է փախստականի կարգավիճակ շնորհվելու օրվանից հետո 3 ամսվա ընթացքում:

Դիմումին պետք է կցվի այն բնակարանի նկատմամբ իրավական հիմքը, որտեղ միգրանտն ապրում է կամ մտադիր է ապրել, և վարձակալության պայմանագիրը, որտեղ նշված է վարձակալության վճարի չափը:

Ընտանիքի անդամին կտրամադրվի կացության թույլտվություն՝ այն ընտանիքի անդամին շնորհված բնակության թույլտվության վավերականության ժամկետը չգերազանցող ժամանակահատվածի համար, որի հետ նրանք պատրաստվում են բնակվել, օրինակ, եթե Լեհաստանում բնակվող միգրանտն ունի 7 ամիս ֆիքսված ժամկետով կացության թույլտվություն, ապա նրա ընտանիքի անդամներին, ովքեր կժամանեն Լեհաստան, նույնպես կտրամադրվի կացության թույլտվություն 7 ամիս ժամկետով:

Եթե Լեհաստանի տարածքում բնակվող միգրանտին տրամադրվել է հաստատվելու թույլտվություն, Եվրոհամայնքի երկարաժամկետ

բնակության թույլտվություն կամ փախստականի կարգավիճակ, ապա նրա ընտանիքի անդամներին կտրամադրվի կացության թույլտվություն 2 տարի ժամկետով:

Ընտանիքի վերամիավորման դիմումները պետք է ներկայացվեն համապատասխան տեղական կառավարման մարմին (Վոեվոդա):

7. Առողջապահական համակարգը

Եթե ցանկանում եք օգտվել առողջապահական սպասարկումից, ստիպված չեք վճարել բժշկական քննության կամ բուժման համար միայն այն դեպքում, եթե դուք ապահովագրված եք և վճարում եք ապահովագրավճարը: Այլ իրավիճակներում դուք ստիպված եք վճարել բժշկական քննության կամ բուժման համար: Բացառություններ.

- մինչև 18 տարեկան անձինք,
- հղի կանայք՝ ծննդաբերության դեպքում և հետծննդյան խնամքի ընթացքում,

ույրեր իրավունք ունեն անվճար բուժօգնության, նույնիսկ եթե ապահովագրված չեն, և անկախ ազգությունից: Ավելին, անհետաձգելի իրավիճակներում, կամ եթե անձը գտնվում է կյանքին վտանգ սպառնացող վիճակում, չապահովագրված անձինք ևս ունեն բժշկական ծառայություններից և հանրային առողջապահական ծառայությունների աջակցությունից անվճար օգտվելու իրավունք:

Սոցիալական աջակցության ցանցից աջակցություն ստանալու համար դիմելու իրավունք ունեցող անձինք, օրինակ, գործազուրկները, ունեն նաև անվճար բժշկական ծառայությունների իրավունք:

Եթե դուք աշխատում եք Լեհաստանում, ձեր առողջության ապահովագրավճարները վճարում է ձեր գործատուն: Անձինք, ույրեր ունեն գործազրկության նպաստի իրավունք, ունեն միայն անվճար բժշկական ապահովագրության իրավունք:

Հետևյալ անձինք իրավունք ունեն աշխատանքի գրասենյակում գրանցվելու որպես գործազուրկ.

- փախստականներ և ժամանակավոր կամ լրացուցիչ (կոմպլեմենտար) պաշտպանության կամ հանդուրժելի կերպով մնալու թույլտվություն ունեցող անձինք,
- հաստատվելու թույլտվություն ունեցող անձինք,
- Եվրոհամայնքի երկարաժամկետ բնակության թույլտվություն ունեցող անձինք,
- Լեհաստանում աշխատանքի կամ ուսման, ընտանիքի վերամիավորման նպատակով ժամանակավոր բնակության թույլտվություն ունեցողներ և Լեհաստանի քաղաքացիների ընտանիքի անդամներ:

Առողջության ապահովագրությունն ընդգրկում է նաև Լեհաստանում բնակվող միգրանտների ընտանիքների անդամներին, ովքեր (միգրանտները) ունեն բժշկական ապահովագրության իրավունք:

8. Սոցիալական ապահովագրության համակարգը

Գործազրկության նպաստ

Միգրանտների հետևյալ կատեգորիաներն իրավունք ունեն դիմելու գործազրկության նպաստի համար.

- փախստականներ և հանդուրժելի կերպով գտնվող անձինք, ժամանակավոր կամ կոմպլեմենտար պաշտպանության կարգավիճակ ունեցող անձինք,
- հաստատվելու թույլտվություն ունեցող անձինք,
- Եվրոհամայնքի երկարաժամկետ բնակիչներ,
- ընտանիքի վերամիավորման հիմքերով ժամանակավոր բնակության թույլտվություն ունեցողներ,
- Լեհաստանի քաղաքացիների ընտանիքի անդամներ:

Գործազրկության նպաստ ստանալու համար դուք պետք է գրանցվեք տեղական աշխատանքի բյուրոյում: Գործազուրկի կարգավիճակը ձեզ տալիս է անվճար բժշկական օգնության իրավունք:

Անաշխատունակության (հաշմանդանության)/տարիքի նպաստ (մշտական կամ ժամանակավոր)

Հաշմանդամության/տարիքի նպաստը տրամադրվում է այն անձանց, ովքեր, որպես հաշմանդամության կամ տարիքի հետևանք, չեն կարողանում աշխատել և գտնվում են եկամտի որոշակի շեմից ցած: Հետևյալ կատեգորիաների միգրանտներն իրավունք ունեն դիմելու հաշմանդամության/տարիքի նպաստի համար.

- փախստականներ և հանդուրժելի կերպով գտնվող անձինք, ժամանակավոր կամ կոմպլեմենտար պաշտպանության կարգավիճակ ունեցող անձինք,
- հաստատվելու թույլտվություն ունեցող անձինք,
- Եվրոհամայնքի երկարաժամկետ բնակիչներ:

Մնացած միգրանտները չունեն սոցիալական ապահովության աջակցություն ստանալու իրավունք:

Ընտանեկան նպաստ

Հետևյալ կատեգորիաների միգրանտներն իրավունք ունեն դիմելու ընտանեկան նպաստի համար.

- փախստականներ և հանդուրժելի կերպով գտնվող անձինք, ժամանակավոր կամ կոմպլեմենտար պաշտպանության կարգավիճակ ունեցող անձինք, ովքեր ունեն հաստատվելու թույլտվություն,
- Եվրոհամայնքի երկարաժամկետ բնակիչներ:

Ընտանեկան նպաստը ըստ էության երեխայի նպաստ է և տրվում է մինչև երեխայի 18 տարեկան դառնալը (կամ՝ 21 տարեկան, եթե նա շարունակում է ուսումը): Լրացուցիչ նպաստներ տրամադրվում են հետևյալ դեպքերում.

- ծնունդ,
- մայրության արձակուրդ,
- բազմազավակ ընտանիքներ,
- երեխաների հաշմանդամություն,
- ուսումնական տարվա սկիզբ,
- երեխաների ուսումնառություն սովորական վայրից դուրս:

9. Բնակարանային պայմաններ

Կացարանի նպաստ կարող է տրվել այն անձանց, ովքեր բավարարում են ցածր եկամտի որոշակի չափանիշներ:

Օտարերկրացին կարող է դիմել սոցիալական կացարանի համար նույն պայմաններով, ինչ՝ Լեհաստանի քաղաքացին, եթե նրա նյութական վիճակը վատ է, և եթե նա չունի իր սեփական կացարանը: Յուրաքանչյուր տեղական համայնք կարող է իր որոշման մեջ նշել, թե ու՛մ կարող է տրվել սոցիալական բնակարան: Սոցիալական կացարանը առաջին հերթին տրամադրվում է այն անձին, ում նյութական վիճակն առավել դժվարին է, ով վտարվել է, ով կորցրել է իր սեփական կացարանը բնական աղետի (ջրհեղեղի կամ հրդեհի) պատճառով:

10. Դիպլոմների ճանաչում

Ըստ Կրթության և գիտության նախարարի՝ «Արտասահմանում ստացած դպրոցի վկայականների և հասունության վկայականների ճանաչման կանոնակարգի» (ապրիլի 6, 2006), արտասահմանում ստացած ցանկացած դպրոցի վկայական ճանաչվելու համար պետք է օրինականացվի այն երկրում, որտեղ տրամադրվել է, և այնուհետև ներկայացվի Լեհաստանում գտնվող տեղական կրթական մարմին (kuratorium oświaty):

Օտարերկրյա հավաստագրերը (վկայականները), որոնք թույլ են տալիս արտերկրում դիմել բարձրագույն կրթության համար, որպես այդպիսին ճանաչվում են Լեհաստանում, ինչպես և այլ դպրոցի վկայականներ: Սակայն դրանք պետք է պարունակեն դրույթ այն մասին, որ դրանք ունեցողները կարող են իրենց երկրներում դիմել բարձրագույն ուսումնական հաստատություններ: Եթե վկայականը նման դրույթ չի ներառում, ապա հավաստագիրը տրամադրած դպրոցի ղեկավարությունը կարող է տրամադրել այդ փաստը հավաստող առանձին տեղեկանք:

Արտասահմանյան բարձրագույն կրթության դիպլոմ ունեցողները պետք է դիմեն պրոֆեսորադասախոսական կազմի խորհրդին (կամ լեհական որևէ

բարձրագույն ուսումնական հաստատության այլ հիմնական կազմակերպական միավորին): Այն բարձրագույն ուսումնական հաստատությունը, ուր նրանք դիմում են, պետք է ընտրվի այն հաստատությունների թվից, որոնք իրավունք ունեն շնորհելու դոկտորի ակադեմիական աստիճան գիտության տվյալ ոլորտում:

Արտասահմանյան գիտական աստիճանները Լեհաստանում ճանաչվում են Ազգային կրթության և սպորտի նախարարի՝ «Արտասահմանում ստացած ակադեմիական աստիճանների և արվեստի բնագավառում ստացած աստիճանների ճանաչման կանոնակարգի» հիման վրա (հունիսի 3, 2005թ.), որն ուժի մեջ է 2005 թ. հունիսի 29-ից: Գնահայման ընթացակարգը նման է բարձրագույն կրթության դիպլոմների ճանաչման ընթացակարգին: Ակադեմիական աստիճանների ճանաչման մարմինները ֆակուլտետների խորհուրդներն են, որոնք իրավասու են շնորհելու հաբիլիտացված դոկտորի աստիճան (doktor habilitowany):

Վերը նշվածը չի տարածվում այն երկրներում տրամադրված վկայականների վրա, որոնք Լեհաստանի հետ ստորագրել են կրթական հավաստագրերի ճանաչման վերաբերյալ երկկողմ համաձայնագիր (Ավստրիա, Գերմանիա, Լիտվա, Բելառուս, Ուկրաինա):

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք Լեհաստանի Ակադեմիական փոխճանաչման և միջազգային փոխանակման բյուրոյի կայքէջը՝ <http://www.buwiwm.edu.pl/>:

11. Միգրանտներին առաջարկվող աջակցության ծառայություններ

Լեհաստանի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության դեսպանատուն

Լեհաստան

Վարչավա 02-803

Բեկասով փողոց 50

Հեռ.՝ (48 22) 8990940-42.8990936-37

Հեռ./Ֆաքս՝ (48 22) 8990935

Էլ. փոստ՝ secretariat@armenia.internetsdsl.pl

Հայաստանում Լեհաստանի Հանրապետության (RZECZPOSPOLITA POLSKA) դեսպանություն

Երևան, Հանրապետության փողոց 44ա

Հեռ.՝ 542493, 542495

Ֆաքս՝ 542498, 542496

Էլ. փոստ՝ polemb@arminco.com

Օտարերկրացիների գրասենյակ (Urząd do spraw Cudzoziemcow)

Վարշավա 00-564, Քոշիքովա 16

(Koszykowa 16 00-564 Warszawa)

Հեռ.՝ 0 22 601 74 02

Ֆաքս՝ 0 22 601 74 13

<http://www.udsc.gov.pl/>

«Կարիտասի» լեհաստանյան գրասենյակ (Caritas Polska)

միգրանտների և փախստականների աջակցման կենտրոններ

Բյալիստոկ 43-200, Վարշավսկա փողոց 32

(43-200 Białystok, ul. Warszawska 32)

Հեռ./Ֆաքս՝ (85) 732 55 53

Էլ. փոստ՝ migranci-bialystok@caritas.pl

Լյուբլին 20-950, Պրիմասա Ստեֆանա Վիշինսկյեզո 2

(Lublin, ul. Prymasa Stefana Wyszyńskiego 2)

Հեռ.՝ (81) 743 71 86

Էլ. փոստ՝ migranci-lublin@caritas.pl

Զգոժելեց 59-900, Կշյենզա Դոմայնսկյեզո 12

(59-900 Zgorzelec, ul. Księża Domańskiego 12)

Հեռ.՝ (75) 771 65 61

Էլ. փոստ՝ migranci-zgorzelec@caritas.pl

Վարշավա 00-322, Կրակովսկյե փողոց 62

(00-322 Warszawa, ul. Krakowskie 62)

Հեռ./Ֆաքս՝ (22) 826 99 10

Էլ. փոստ՝ migranci-waw@caritas.pl

Սլուբիցե 69-100, Վոյսկա Պոլսկյեզո փողոց

(69-100 Słubice, ul. Wojska Polskiego)

Հեռ.՝ (95) 737 40 06,

Էլ. փոստ՝ migranci-slubice@caritas.pl

Լեհական մարդասիրական գործողություն - Փախստականների աջակցության կենտրոն

Վարչավա 00-031, Շպիտալնա 5/3

(00-031 Warszawa, Szpitalna 5/3)

Հեռ.՝ (22) 828 88 82, ֆաքս՝ (22) 831 99 38, 828 88 82 w.217

Էլ. փոստ՝ ucho@pah.org.pl

www.pah.org.pl/uchodzczy

Լեհական Կարմիր Խաչ

Վարչավա 00-561, Մոկոտովսկա փողոց 14

(00-561 Warszawa, ul. Mokotowska 14)

Հեռ.՝ (22) 628 55 75, 621 36 25, ֆաքս՝ (22) 628 41 68

Էլ. փոստ՝ info@pck.org.pl www.pck.org.pl

ՄԱԿ ՓԳՀ լեհաստանյան գրասենյակ

Վարչավա 00-556, Ռո սոդոտա 2

00-556 Warszawa, al. RoŚ 2

Հեռ.՝ (22) 628 69 30, 625 61 46, ֆաքս՝ (22) 625 61 24

Էլ. փոստ՝ polwa@unhcr.ch

www.unhcr.pl

ՄՄԿ (Միգրացիայի միջազգային կազմակերպություն)

Վարչավա 00-302, Մարիենշտատ 8

(ul. Mariensztat 8, 00-302 Warszawa)

Հեռ.՝ (+48 22) 5389103

Ֆաքս՝ (+48 22) 5389140

Էլ. փոստ՝ iomwarsaw@iom.int

Ուղղափառ եկեղեցու գթասրտության կենտրոն «Էլեոս» (“Eleos”)

Վարչավա 47, Բյալիստոկ փողոց 15-062

(15-062 Białystok, ul. Warszawska 47)

Հեռ.՝ (085) 732 89 07

Էլ. փոստ՝ uchodzczy_eleos@op.pl, eleos@poczta.onet.pl

Լեհաստանի փախստականների ընկերակցություն

Վարչավա 00-375, Սմոլնյա փողոց 40

(00-375 Warszawa, ul. Smolna 40)

Էլ. փոստ՝ assref@hotmail.com

www.republika.pl/assref

«Փրկարար» («Ogwalenię»` “Ocalenie”) հիմնադրամ

Վարչավա, Մոկոտովսկա փողոց 14

(Mokotowska street 14, Warsaw)

Հեռ.՝ 0 - 22 - 628 55 76

Էլ. փոստ՝ ocalenie@wp.pl

**Միգրանտների խնամքի և ինտեգրման «Պրոքսենյա» (“Proxenia”)
ընկերակցություն**

Վարչավա 02-647, Բախմացկա փողոց 4/5

(02-647 Warszawa, ul. Bachmacka 4/5)

Ֆաքս՝ 581 85 21

Էլ. փոստ՝ proxenia@wp.pl

**Հալինա Նյեչ (Halina Nieć) մարդու իրավունքների պաշտպանության
ընկերակցություն**

Կրակով 31-136, Սոբյեսկյեգո փողոց 7/3

(31-136 Krakow, ul. Sobieskiego 7/3)

Հեռ./Ֆաքս՝ (12) 633 72 23

Էլ. փոստ՝ office@niecassociation.org

www.niecassociation.org

Մարդու իրավունքների Հելսինկյան հիմնադրամի Լեհաստանի գրասենյակ

Վարչավա 00-018, Ջգոդա փողոց 11

(00-018 Warszawa, ul. Zgoda 11)

Հեռ.՝ (22) 828 69 96, 828 10 08, 556 44 40

Ֆաքս՝ (22) 828 69 96, 556 44 50 կամ 51

Էլ. փոստ՝ hfhr@hfhrpol.waw.pl, sekretariat@hfhrpol.waw.pl

www.hfhrpol.waw.pl

**Յագյելոնյան (Jagiellonian) համալսարանի մարդու իրավունքների
իրավաբանական կլինիկա**

Կրակով 30-197, Ջիգմունտա Կրաչիմսկյեգո փողոց 18

(30-197 Krakow, ul. Zygmunta Krasińskiego 18)

Հեռ./Ֆաքս՝ (012) 630 19 97

Էլ. փոստ՝ office@juhrc.org

www.ujhrc.org

**Իրավաբանական կլինիկա - Վարշավայի համալսարանի իրավաբանության
ֆակուլտետի ուսանողների իրավական օգնության կենտրոն**

Վարշավա 00-071, Պշեդմիշչյե Կրակովսկյե 26/28

(00-071 Warszawa, Krakowskie Przedmieście 26/28)

Հեռ.՝ (22) 552 08 11; Հեռ./ֆաքս՝ (22) 552 43 18

Էլ. փոստ՝ klinika@wpia.uw.edu.pl

www.klinika.wpia.uw.edu.pl

«Մեկ աշխարհ» ընկերակցություն

Քաղաքացիական ծառայության միջազգային կազմակերպության (Service Civil International) Լեհաստանի մասնաճյուղ

Պոզնան 60-830, Կրաշինսկյեգո փողոց 3 ա/1

(60-830 Poznań, ul. Krasieńskiego 3a/1)

Հեռ.՝ (61) 848 43 38, ֆաքս՝ (61) 848 43 37

Էլ. փոստ՝ info@jedenswiat.org.pl

www.jedenswiat.org.pl

«Ա-վենիր» (A-venir) հիմնադրամ

Լյուբլին 20-704, Վոյցեխովսկա 7J

(ul. Wojciechowska 7J, 20-704 Lublin)

Հեռ.՝ 81 444 63 88, ֆաքս՝ 81 444 63 86;

Բյալիստոկ 15-062, Վարշավսկա փողոց 43

(ul. Warszawska 43, 15-062 Białystok)

Հեռ.՝ 085 740 72 88, ֆաքս՝ 085 740 72 88

Էլ. փոստ՝ fundacja@a-venir.org.pl,

www.a-venir.org.pl

«Օրինաց երկիր» հիմնադրամ

Լյուբլին 20-023, Ֆ. Շոպենի փողոց 14/70

(ul. F. Chopina 14/70, 20-023 Lublin)

Հեռ.՝ 081 743 68 05

Էլ. փոստ՝ fundacja@fipp.org.pl

www.fipp.org.pl

**Սոցիալական ինտեգրման և ձեռնարկատիրության զարգացման «Վիա» (Via)
հիմնադրամ**

Վարշավա 00-241, Դուգա փողոց 44/50 lok. 204

(ul. Długa 44/50 lok. 204, 00-241 Warszawa)

Հեռ.՝ 022 635 54 79, 022 6356658; Ֆաքս՝ 022 635 55 76
Էլ. փոստ՝ fundacja@via.org.pl, biuro@via.org.pl
www.via.org.pl

Միգրանտների աջակցության H.A.I COM կազմակերպություն
(„H.A.I.” COM Migrant Support)

Վարչակազմ 02-001, Յերոզոլիմսկյե պողոտա 91/11
(Al. Jerozolimskie 91/11 02-001 Warszawa)
Հեռ./Ֆաքս՝ 022 629 67 13, 0502 225 734, 0505 179 085, 0503 353 778
Էլ. փոստ՝ biuro@hai.com.pl
www.hai.com.pl

Միգրանտների «Ֆու Սիենֆու» (Fu Shenfu) կենտրոն

Վարչակազմ 04-118, Օստրոբրանսկա փողոց 98
(ul. Ostrobramska 98, 04-118 Warszawa)
Հեռ.՝ 022 610 02 52
Էլ. փոստ՝ osrodek@migrant.pl

Եմիգրանտների ընկերակցություն

Թղթակցության հասցեն՝
Չեստոհովա 42-202, Պոգոդնա փողոց 12
Գրասենյակ՝ Չեստոհովա 42-200, Պուլասկյեգո փողոց 4/6
(ul. Pogodna 12, 42-202 Częstochowa,
Biuro: ul. Pułaskiego 4/6, 42-200 Częstochowa)
Հեռ.՝ 034 368 42 98, 603 800 058
Էլ. փոստ՝ info@emigrant.net.pl
www.emigrant.net.pl

12. Քաղաքացիության ձեռքբերում

Դուք կարող եք դիմել Լեհաստանի քաղաքացիություն ձեռք բերելու համար 5 տարվա շարունակական բնակությունից հետո՝ հաստատվելու թույլտվության, Եվրոհամայնքի երկարաժամկետ բնակության թույլտվության կամ մշտական բնակության թույլտվության հիման վրա: Լեհաստանի քաղաքացու ամուսինը (կինը) կարող է դիմել Լեհաստանի քաղաքացիություն ստանալու 3 տարվա ամուսնությունից հետո և ունի

հաստատվելու թույլտվություն, Եվրոհամայնքի քաղաքացու
երկարաժամկետ բնակության թույլտվություն կամ մշտական բնակության
թույլտվություն:

Քաղաքացիության դիմումները պետք է ուղղված լինեն տեղական
իշխանություններին (Վոեվոդա):

